

Ա. Մուրվալյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵՋՎԱՍՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ ՀԱՅՈՑ
ԵՎ ՎՐԱՑ ԼԵՋՈՒՆԵՐՈՒՄ

• (Ընդհանուր դարձվածքներն ու արտահայտությունները)¹

Ընդհանուր լեզվաստեղծական և լեզվամտածողական պրոցեսում լեզուների ստադիալ զարգացման միևնույն աստիճանին տարրեր լեզուներում, հաճախ իրարից անկախ, առաջ են գալիս մի շարք լեզվական երևույթներ, որոնք ընդհանուր են առանց ազգակցական որևէ կապի։ Սրանք, այսպես ասած, համամարդկային ընդհանրություններ են, որ կարելի է գտնել զանազան տեղերում տարածված։ Նույնիսկ իրար հետ չփուլ չունեցած (և չունեցող), տարրեր լեզուների մեջ։ Այս կարգի ընդհանրությունները արդյունք են, բնականաբար, ընդհանուր լեզվաստեղծական և լեզվամտածողական պրոցեսի, որ ունեցել են բոլոր լեզուները։

Այս կարգի ընդհանրություններով հարուստ են մանավանդ այն լեզուները, որոնք, բացի ընդհանուր լեզվաստեղծական և լեզվամտածողական պրոցեսից, ունեցել են նաև չփման ու ներթափանցումների ընդհանուր պայմաններ։

Դրանք տրադիցիոն լեզվախմբավորման տեսակետներով ազգակցական ոչ մի կապ չունեն իրար հետ, բայց որոնք, ինչպես Ն. Մառն է ասում, իրոք ազգակցական ամենասերտ կապակցության մեջ են իրար հետ։

Հին հայերենը հին վրացերենին ավելի մոտ է կանգնած, քան դրանցից յուրաքանչյուրն իրենց հարազատ ժողովրդական լեզուներին, որոնք մի սխտեմի լեզուներ են իրենց տիպաբանության հիմնական կողմերով։—ասել է Ն. Մառը։²

Հայոց և վրաց լեզուների այս մոտիկությունն արտահայտվում է ոչ միայն ձևաբանական բազմաթիվ ընդհանրություններով՝ ընդհանուր մասնիկներով ու բառարմատներով (որոնց թիվը հասնում է մոտ 2 հազարի), այլև այդ մոտիկությունն արտահայտվել է, այսպես ասած, լեզվամասնականության հնագույն դրսևորումներով՝ ինչպես բազմազան շարադասական ընդհանուր դարձվածքներով ու արտահայտություններով, այնպես էլ բառաստեղծական բազմաթիվ ընդհանուր ձևերով ու միջոցներով։ Այս կարգի ընդհանրությունների զգալի մասը, անշուշտ, գալիս է զարգացման միևնույն աստիճանի վրա կանգնած մեկ հետաքրքրող երկու լեզվի հնագույն շրջաններից, նրանց սկզբնական ամենամոտ շփումներից ու ներթափանցումներից, նրանց

¹ Մի գլուխ Ն. Մառի անվան լեզվի ինտերուստի գիտական սեփականում 1945 թ. դեկտեմբերի 20-ին կարդացած զեկուցումից (սեյ-վրացական լեզվամասնականությունները) վերնագրով։

² Н. Я. Марр. К Бакинскому дискуссии о ефетидологии и марксизме, Баку, 1932, էջ 18—19։

լեզվամատածողական ընդհանուր գոյավիճակից, ընդհանուր ապրելակերպից ու բնական խաչավորումներից:

Հայոց և վրաց լեզուների ուսումնասիրման գործով, որ, բնականաբար, շատ անհրաժեշտ է, իր ժամանակին առաջինը զբաղվեց հայ-վրացագիտության հիմնադիր Ն. Մառը: Նա իր բազմաթիվ աշխատությունների մեջ, այս կամ այն չափով և այս կամ այն կապակցությամբ, ցույց տվեց այն բազմաթիվ ընդհանրությունները, որ, իրոք, կան հայոց և վրաց լեզուներում: Այս հարցով, ինչպես նա զբաղվեց է Գալուստ Միսրանին (Տեր-Մկրտչյանին)¹ նույնիսկ մտադիր է եղել առանձին զբաղվել, և նա, իրոք, տվեց մի զրաշարք «Հաբեթական տարբերը հայոց լեզուներում» վերնագրով: Պարզ է, որ այս զրաշարքով հնարավոր չէր սպառել հայոց և վրաց լեզուների բոլոր ընդհանրությունները: Այդ ընդհանրությունների վերաբերյալ նա չի հրապարակել ստվար մի ուսումնասիրություն. նրան զբաղեցրել են բազմաթիվ ավելի հրատապ խնդիրներ և այդ հարցով, բնականաբար, արմատապես զբաղվելու ժամանակ չի ունեցել:

Բայց հայոց և վրաց լեզուների ձևա-իմաստային ընդհանրությունները՝ ընդհանուր մասնիկներն ու բառարմատները, ինչպես ցույց եմ տալիս առանձին ուսումնասիրության մեջ, բազմաթիվ են: Ես այդ աշխատանքով հակադրվում եմ այն «տեսակետին», որ լեզվի մեջ ամեն ինչ աշխատում է բացատրել «բնիկ» և «փոխառյալ» հորջորջումներով: Ես, իհարկե, չեմ ժխտում և ճիշտ էլ չի լինի բոլորովին ժխտել փոխառությունները, բայց, իմ կարծիքով, պետք է դիտենալ, որ փոխառությունների (բայց ոչ միևնույն կերպով փոխառությունների) խնդիրը կարելի է դնել միայն այն ժամանակից սկսած, երբ արդեն կազմավորված վիճակում հանդես են գալիս ընդհանրապես լեզուներ, օր. հայերենը, վրացերենը և այլն, այսպես միևնույն բառերի ծագման մասին տարբեր, նույնիսկ անվանի դիտականների մոտ միշտ էլ կդառնան իրար հակառակ ու իրար ժխտող կարծիքներ: Իհարկե մի օրինակ. ՀՄՍԻ ԳԱ իսկական անդամ Հ. Աճառյանի կարծիքով, օր., լորձն խոց-խոցել. կալ, ննխ-ննխել բառերը հայերենից են փոխառյալ վրացերենի մեջ, մինչդեռ նորվեգացի լեզվաբան-վրացագետ Jans Vogt-ի կարծիքով՝ այդ նույն բառերը, ընդհակառակը, վրացերենից են փոխառյալ հայերենի մեջ:

Ո՞րն է ճիշտը:

Իմ կարծիքով՝ ոչ մեկը և ոչ էլ մյուսը:

Սրանք փոխառություններ չեն, այլ հայ-վրացական ընդհանրություններ են, ընդհանրություններ, որոնք գալիս են հնագույն շրջաններից:

Նման ընդհանրություններ կան նաև հայ-վրացական լեզվաստեղծության և լեզվամատածողության դրսևորման հնագույն ձևերի ու միջոցների մեջ, որոնք, իրենց հերթին, այս կամ այն չափով համընկնում են (և պետք է համընկնեն) և՛ ուրիշ լեզուների հետ (ինչպես հարևան, այնպես էլ իրարից հեռու գտնվող լեզուների մեջ՝ շնորհիվ երբեմնի լեզվաստեղծության և լեզվամատածողության ընդհանուր պրոցեսի): Իսկ այստեղ արդեն փոխառությունների խնդիրը գրեթե չի կարելի դնել:

¹ Ն. Մառի անսխալ նամակներից մեկում (№ 18), որ պահվում է մեր Մատենադարանի արխիվային նյութերի մեջ, նամակը անթվակիր է. հետազոտում նրա գրություն տարեթիվը ենթադրաբար չհանկված է՝ 1893:

Դրանք ընդհանրություններ են, որոնք, ինչպես արդեն նշեցինք, բազմաթիվ են և սպասում են իրենց ուսումնասիրողին: Մենք այստեղ կգրադվենք (արդեն ասել ենք) հայոց և վրաց լեզուների մտածողության և բառադադափարների դրսևորման ընդհանուր ձևերի ու միջոցների համեմատական ուսումնասիրությամբ, որ շատ հետաքրքրական է:

* * *

Հայոց և վրաց լեզուների մտածողության և բառադադափարների դրսևորման ընդհանուր ձևերը (դարձվածքները), ինչպես կտեսնենք, անմիջապես կապված են, նախ և առաջ, մարդու մարմնի զանազան մասերի, այն է՝ անդամների հետ, օր. ձեռքի, ոտքի, գլխի, աչքի, բերանի, երեսի, լեզվի և այլ մասերի հետ:

Այս կարգի ընդհանուր արտահայտությունները այնքան նման են իրար, որ, թվում է, դրանք մեկը մյուսի բառացի թարգմանություն են: Իայց երբ թափանցում ենք դրանց խորքը, տեսնում ենք, որ դա, իրոք, այդպես չէ: Երանք, անշուշտ, երբեմնի լեզվաստեղծության և լեզվամտածողության ընդհանուր պրոցեսի վերապրուկներ են, հնություններ, որոնք պահպանված են այսօր իմաստի երանգավորումներով, բայց որոնք նախապես ունեցել են, անկասկած, ուղղակի կամ հիմնական նշանակություն, այսինքն՝ դրանք մի ժամանակ արտահայտել են, անշուշտ, այն, ինչ որ այսօր դրանցից կարելի է մոտավորապես բառացի հասկանալ:

Ընական է, որ աստիճանաբար լեզվամտածողության փոփոխության հետ միասին նրանց սկզբնական ուղղակի նշանակության փոփոխումով, բայց արտահայտման ձևերով ու միջոցներով մնալով զրեթե նույնը՝ ժամանակի ընթացքում ձևի և բովանդակության մի այնպիսի հակասություն է առաջ եկել դրանց միջև, որ հաճախ տարբեր լեզվամտածելակերպ ունեցող մարդու համար այսօր դժվար հասկանալի է կամ բոլորովին անհասկանալի է: Այդ է սլասոճառը, որ նման դարձվածքներ մի լեզվից մի այլ լեզվի թարգմանելիս հնարավոր չէ բառացի թարգմանել:

Դրանք, անշուշտ, տվյալ լեզվի հնագույն մտածողության տարբեր վերապրուկներ են (կապված մարդու սկզբնական աշխարհաճանաչման ու ինքնագիտակցման հետ), որոնք այսօր արդեն մնացել են, այսպես ասած, իբրև յուրահատկություններ՝ հետադարձում առաջացած, ինչպես արդեն ասացի, ձևի և բովանդակության հակասությունների հետևանքով:

Այսպիսի յուրահատկություններով, ընականաբար, հարուստ են բոլոր այն լեզուները, որոնք կրել են մտածելակերպի փոփոխություն: Իսկ որքան ուժեղ է այդ փոփոխությունը, այնքան հարուստ է լեզուն նման յուրահատկություններով:

Նման յուրահատկություններով հարուստ են առանձնապես հայոց և վրաց լեզուները: Սրանք, ըստ երևույթին, կրել են լեզվամատածելակերպի ուժեղ փոփոխություն:

Բայց երբ իրար ենք համեմատում հայոց և վրաց լեզուների այդ յուրահատկությունները, տեսնում ենք, որ նրանց մեծ մասն իրար համընկնում է արտահայտման ձևի և բովանդակության տեսակետից:

Այսպիսով, ուրեմն, ընական է, որ հայոց և վրաց լեզուները ստադիալ զարգացման միևնույն աստիճանին պետք է ստեղծելին, մեծ մասամբ, այդ

ընդհանուր, այսպես ասած, յուրահատկութիւնները: Երբ ասում ենք կրակի գին և արտահայտութիւնը, որ վրացերենում էլ բառացիորեն նույնն է՝ ուլցեփոն տասնո (ցեցիլիս փասիա «կրակի գին է»), այսօր էլ հասկացվում է «թանգ է» նշանակութեամբ: Իրոք, վաղագույն շրջաններում կրակը, որպես առարկա, դժվար ձեռք բերովի պետք է լիներ և հետևապես թանգ պետք է գնահատվեր: (Իսկ ջուրը, ընդհակառակը, համեմատաբար հեշտ ձեռք բերովի և, հետևապես, էժան էր, ուստի դրանից կազմված է՝ ցրի գին և «էժան է» արտահայտութիւնը, որը վրացերենում էլ նույնն է՝ ցւլոն տասնո (ծղ'իլիս փասիա «ջրի գին է»)):

Վերցնենք մի այլ արտահայտութիւն՝ «ձեռք տալ» — վրց. Բելոն Թուլցեմ (խելիս մոցեմա «ձեռք տալ»), որ նախապես ուղղակի նշանակութիւն է ունեցել, այն է՝ «ձեռք մեկնել մեկին, ձեռք տալ», որից՝ Դեմն-տու = վրց. Բել-Թոնալցեմ (խել մոսացեմի «ձեռնտու») ստացել է «շահավետ, «գտակար» նշանակութիւնը (որովհետև առևտրի ժամանակ իրար ասելով՝ Դեմնֆո տուր = վրց. Բելո Թոմե (խելի մոմե «ձեռքդ տուր») նշանակում է «համաձայնիր» (ձեռքը գնողի ձեռքի մեջ դնելը համաձայնութեան նշան էր)):

Այսպես նաև՝ Թոնտուր = վրց. Բլեդ-Թոլցեմ (աղբի միցեմա «առևտուր») նախ նշանակել է «առել և ապա՝ «վաճառականութիւն»։ Թչի լուլս = վրց. Թեալոն Տոնալցե (թվալիս սինաթի «աչքի լույս») նախ «աչքի լույս, տեսողութիւն» է նշանակել և ապա՝ «սիրելի անձ»։ Գլուխ = վրց. Թաւո (թավի «գլուխ») նախ ուղղակի «գլուխ» է նշանակում և ապա՝ «խելք, գիտութիւն» (օր.՝ ասում են «լավ գլուխ ունի») = վրց. Կարցի Թաւո Բլեւ կարգի թավի Թվա)... և այլն:

Հայոց և վրաց լեզուների ընդհանուր արտահայտութիւնների կամ դարձվածքների մեջ պարզ նկատելի է, որ դարգացման միևնույն աստիճանի վրա գտնվող՝ մասնավորապես մեզ հետաքրքրող երկու լեզվի ընդհանուր դարձվածքները կամ, այսպես ասած, բառ-նախադասութիւնները (որոնք հաճախ մի քանի բառից են կազմված, բայց սովորաբար այսօր մի բառի նշանակութիւնն են արտահայտում), նախ և առաջ, կապված լինելով մեծ մասամբ մարմնի գանազան մասերի կամ անդամների հետ՝ ցույց են տալիս մարդու երբեմնի ինքնագիտակցութիւնը կամ ինքնաճանաչումը:

Սկզբնական շրջաններում մարդու ինքնաճանաչութիւնը, բնականաբար, պետք է դրսևորվեր մարմնի գանազան անդամներով և դրանց հետ կապված գործողութիւններով, այլ կերպ ասած՝ առաջատարը կամ պորժարարը մարմնի այս կամ այն անդամը պետք է լիներ, որի հետ կապվել է՝ այս կամ այն գործողութիւնը:

Մարմնի անդամների հետ կապվող երկու լեզվի բաղմաթիվ ընդհանուր դարձվածքների մեջ, նախ և առաջ, պետք է վերցնել «ձեռքի» հետ կապված դարձվածքները: Մարմնի այս անդամն է, բնականաբար, որ կապի մարդայնացման գործում վճռական դեր է կատարել, այն է, մարդակապիկը արդեն սովորելով քայլել հետևի թաթերի (այսինքն՝ ոտների) վրա և առջևի թաթերը (ձեռքերը) ադատելով՝ աշխատանքի է դնում: Աշխատանքը, ինչպես հայտնի է, այդ մարդակապիկի մեջ զարգացնում է մտածողութիւնն և լեզուն:

Ձեռքի աշխատանքի (որի հետ և մտածողութեան ու լեզվի) գիտակցման կամ ճանաչման հետ միասին՝ աստիճանաբար գիտակցվել են նաև, անշուշտ, մարմնի մյուս անդամները և նրանց հետ կապված գործողութիւնը:

(կամ աշխատանքը)՝ Այսպիսով մարմնի այդ անդամների և նրանց կատարած աշխատանքի հետ էլ, իմ կարծիքով, կապվել են լեզվամատածողության սկզբնական գրականության բազմաթիվ արտահայտությունները: Մարմնի այդ անդամներից են (ձեռքից հետո)՝ ոտքը, գլուխը, աչքը, երեսը, բերանը, լեզուն, սիրտը, խելքը, միտքը... և այլն:

Այժմ վերցնենք մարմնի տարբեր անդամների հետ կապված՝ երկու լեզվի ընդհանուր դարձվածքները:

ա) Առաջին հետ կապված ընդհանուր դարձվածքները երկու լեզվում էլ չափազանց յատ են ձեռքի հետ կապված ընդհանուր արտահայտությունները: Նման արտահայտություններից կարող ենք վերցնել, որ, ձեռ ու ուր կապել = եղ-տեցին Ձեռք (խել փեխի շեկլրա) թրավունքից զրկել: Թույլ չտալ մի բան անել, արդել, խանգարել: ձեռը դատարկ (! դատարկաձեռն) = եղ լյարդը (խել ցորիքի) ձեռնունայն, ազատ: ձեռը երկն = եղ-ցրդը (խել-գրծի) ռուհուր, հարուստ: ... Այսպես նաև՝ ձեռը թեթև = վրց: խել-սուբուֆի բարենաջող, անփաստ: ձեռքը կարն (! ձեռքը պակաս) = վրց: խել-մեկի || խել-մեկիքի բաղադր, չքավոր, խեղճ, դատարկաձեռն: ձեռի մեջը քոր է գալիս վրց: խելի-զուլի մեփխանքա մեկից մի բան ստանալու գուշակել: ձեռին մտքի տալ = վրց: խելի դուրեքա մեկից կախում ունենալ: ձեռից զնալ = վրց: խելիդամ ծառուլա զրկվել, ոչնչանալ, փչանալ, մեռնել, կորչել: ձեռները լվանալ = վրց: խելբիս դաքանա փոխք: մի բանից հույսը կտրել: ձեռները կապել = վրց: խելբիս շեկլրա զբաղեցնել, թույլ չտալ գործ անել: ձեռով անել = վրց: խելի դամնելա անշանացի անել, կանչել: ձեռաց = վրց: խելադ թակույն, անմիջապես: ձեռք մեկնել (! հասցնել) = վրց: խելիս գաժվդամա ռզնել, նպաստել: ձեռք վերցնել = վրց: խելիս ազերա թողնել, մի բանից հեռանալ, հույսը կտրել: ձեռք քաշել = վրց: խելիս մոծերա ստորագրել: ձեռք առլ (! ձեռնառլ) = վրց: խելիս մոցեմա || խել մոցեմի ձեռնառլ, օգտակար: ձեռ գցել (! ձեռքը ձգել || ձեռք բերել) = վրց: խելի շազգերա տիրանալ, ստանալ, հայթայթել, գտնել: ձեռքերը ծալած նստել = վրց: խելբ-դակրերի զղամա բանգործ նստել: ձեռքը բաց (! ձեռնբաց) = վրց: խելիդ || խել-դամ-խելի բառատաձեռն, ոչ ժլատ: ձեռքը գոց = վրց: խել-մոցերի բժլատ, գծի: ձեռը ծուռ (! ձեռնաքաշ) = վրց: խել-մրուդե հափշտակող, տանու գող: մի ձեռք շոր = վրց: Էրթի խելի տանիսամսսի մի հաղնելու շոր: քո ձեռքն (! ձեռքին) է = վրց: շեմ խելիդ բո իրավունքի տակ է: ձեռքը նայել = վրց: խելի դուրեքա բանոր օղնությանը կարոտ ըլլալ, անկե նրապատ մը ակնարկել: ... և այլն: Այսպես նաև (Թրիֆիսի բարբառում,¹ որ ընդհանուր է նաև մյուս բարբառների հետ)՝ ձեռքը բռնող չունի = վրց: խելիս դամների արտ եղալա բարդելոդ կամ օղնող չունի: ձեռքը չեմ բռնում

¹ Հայերեն օրինակները բերելիս օգտվում եմ մեծ մասամբ ա) Մ. Ամասուհի, Հայոց Բառ ու Բան (1913, Վաղարշապատ) գրքից: Բո մյուս օրինակներում չեմ նշում: Բ) Հ. Անտոյան, Հայերեն զոգաբանական բառարան (1913, Թիֆլիս), Գ) Ստ. Մալխասյանց, Հայերեն բացարձակ բառարան (1944, Երևան) և այլն: Օրինակները մեծ մասամբ բերում եմ նոր, մոզավորական լեզուներից, որոնց մի մասը կապված է. աշխույժ, հին լեզուների (հին հայերենի և հին վրացերենի) հետ:

² Այս օրինակները բերում եմ Տ. Աղեքսանդրյան, Թիֆլիսից մասվոր կյանքը (1985, Թիֆլիս, մասն Ա, էջ 337—337) գրքից: Օրինակները բերում եմ որոշ քերականական ձևերի փոփոխումների:

վրց. խելս ար գիճեր չչեմ արգելում։ ձեռը չի տալիս գործի = վրց. խելս ար ալիքս սափմես թուլլ է՝, ձեռիս բան ունեմ = վրց. խելլի սափմե մափվս զգրադված եմ։ ձեռին ոչինչ չունի = խելլի արա ունիրավս-բա ճանփող մարդ է՝. ձեռներից կրակ է թափվում = վրց. խելբիդուն ցեցխլբեսա եղրիս թիր, հնարագետ մարդ է՝. ձեռք տալու բան է = վրց. խել մոսուցեմի սոփմես թողտավետ բան է՝. ձեռը բաց մարդ է = վրց. խել-գուսխնիլի կացյա ճառատաձեռն, առատասիրտ մարդ է՝. ձեռ չի տալիս էդ գինը = վրց. խելս ար մաճլիս էգ փասի թանգ է՝. ձեռը մեկնած ման է զալիս = վրց. խել-գաշ-վերիլի դախորեքա մուրում է՝. ձեռը չի կպցնում բանի = վրց. խելս ար ալաքեքս սափմես թուլլ է՝. ձեռդ վրաս չեկավ = վրց. շեմի խելի ար մամիս-դա ճանհաջող էր։ ձեռդ ու է բռնում = վրց. խելս վիմ գիճերս թով է քեզ արգելում։ ձեռը դիմ է անում բոլորին = վրց. խելս ուշվերս դվիլաս թողոր-մություն է խնդրում։ ձեռներս է՝ իմը չեն = վրց. խելբի չեմի աղար ա-րիս ճատ են դադրել, հոգնել... և այլն։

բ) «Ուտի» եետ կապված ընդհանուր դարձվածքները. ախտիդ պետք է նշել նաև ուտի հետ կապված ընդհանուր արտահայտությունները, որպիսիք են՝ ոտ ընել = ցեծոն ձեռն (փխիս աղգմ) (երեսայոց նոր ոտքով գնալը. ոտը դուրս ունի — ցեծոն յարջո շղճ (փխի կարչի ուղգա) թիշտ դուրսն է լինում. ոտը թեթ (|| ոտից թեթ) = ցեծ-նշծշի (փխ-սուբու-ֆի) թարեհաջող, անփուս մարդոց գալուստ, ել ու մուտք, կամ արագաշարժ, արագընթաց... Այսպես նաև ոտը ծանր = վրց. (փխ-մճիմե) ճեղի. ոտ-ները ընկնել = վրց. փխ-ֆվեշ չափորդեմ թի բան խնդրել, աղաչել, պա-գատել։ ոտները մեկնել (|| ոտները ձգել) = վրց. փխբիս-գանիմա || փխբիս գաշտվա թախնանվել, մեռնել։ ոտի ելնել = վրց. փխգե աղգմա թանգ-նել։ ոտներն էլ իմը չեն = վրց. փխբի չեմի աղար արիս թաղարել են կամ մրսել են։ ոտի տակ գցել (ոտնատակ տալ) = վրց. փխֆվեշ չաղեքա թոխկրտել։ ոտի տակը փորել = վրց. փխ-ֆվեշ թխրա թեկի դեմ որո-գայթ լարել։ ոտով-գլխով կորչել = վրց. քավ-փխիամաղ դակարգվա ճան-հետ կորչել։ ոտս առաջ չի գնում = վրց. փխի ծիմ ար միմիդիս թերկյու-դով կամ կասկածով եմ գնում. ոտատեղ = վրց. փխսաղգիլի թարտաքնոց. ոտնաման = վրց. փխսաղգիլի թերիկ։ ոտս կոտրվել ու չգայի = վրց. փխի մամտեխոդա դա ար մամսուլիդ՝ավի թեանի թե չգայի. ոտավոր = վրց. փ-խսաղգի թեանակ, հետիոտն։ ոտնավորվել = վրց. փխիս աղգմա թեանել գնալ, քայլել։ իմ ոտներս = վրց. չեմ փխբես թեգա չէ, փուլթս չէ. ոտք առնել = վրց. փխիս աղգմա թանկիկներուն քայլ առնել... և այլն։

գ) Գլխի եետ կապված ընդհանուր դարձվածքները. անհամեմատ ավելի շատ են գլխի հետ կապված ընդհանուր դարձվածքները, որոնք երկու լեզ-վում էլ բաղադրանք ձևերով են արտահայտված, ինչպիսիք են՝ գլխամեռ = տաջլլաթո (թավմկվարի) թաղաքչական՝ իբր թե կենդանի մեռած. գլխաշոր (|| գլխի կապոց) = տաջլլաթո (թավալկրավի) թանանց գլխի հան-դերձանքը. գլխացավանք = տաջոն Կյեմ (թավիս տկեմա) թեղուլթյուն, ան-հանդատություն. գլխել = տաջոն ծոծմ (թավիս մարմա) թամանը կերակրով լիքը լցնել։ գլուխ առավ-գնաց = տաջոն ձուլո ճոջոլա (թավի աիդ-ծավիդա) թանդխտացավ կամ մի տեղ գնաց... Այսպես նաև գլուխ առավ-կորավ = վրց. քավի աիդա դալկարգա թոլորովին կորավ։ գլուխ գնել = վրց. քավիս դաղեքա թի բանի հետեւել, հետամուտ լինել, մեկի հետ առար-

կուլթյուն անել, ասել, խոսել, վիճել»։ զլուխ ծռել=վրց. քավիս մոխրա
 ճաղերսել, աղաչել»։ լավ զլուխ ունի=վրց. կարգի քավի տփս խելքի,
 հանճարի, հասկացողության տեր է»։ զլուխ ուռցնել=վրց. քավիս դասիերա
 մի բանի մասին շատ մտածել, նաև շատախոսությունը ձանձրացնել, զգվեց-
 նել, զահլա տանել»։ զլուխ պահել=վրց. քավիս շննախվա ճախատելու ժա-
 մանակ լավ չլրանել»։ զլուխ չունի=վրց. քավի տրա տփս ճեպի մի բան
 սեր կամ փափագ չունի, նաև ուժ չունի»։ զլուխ խոնարհել=վրց. քավիս
 մսխրա խոնարհվել, հպատակվել, ննազանդվել, նաև զլուխ տալ»։ զլուխ
 վեր գնել=վրց. քավիս զաղաղեբա մի բանի սիրո համար անձը գոհել,
 մեռնել»։ զլուխ տալ=վրց. քավիս դակվրա ճերկրպագել, բարեկել»։ զլուխ
 տանել=վրց. քավիս ծաղեբա ճահլա տանել, ձանձրացնել»։ զլուխ ցավաց-
 նել=վրց. քավիս տսկիերա ճանք թափել, աշխատել, մտածել, իրեն նե-
 զուլթյուն առնել»։ զլուխդ մեռնել=վրց. քավի մսղիկվղես փաղաքշական իրր
 մեռցնել»։ զլուխը մեռածը=վրց. քավ-մկվղարի ճնախատական ածական»։
 նրա զլուխը կերավ=վրց. քավի շեուճամա մեռցրեց, սպանեց»։ զլուխը
 եղել=վրց. քավիս մոխսնա ճատ համոզելով, ողորելով և սիրաշահելով խա-
 բել»։ զլուխը ժաժ տալ (|| շարժել) =վրց. քավիս դաֆնելա ճլուխը շարժել,
 համաձայնվել»։ իր զլուխն է լալիս=վրց. քավիս քավա տիրիս ճուր ան-
 բախտության մասին սգալ, հոգս տանել»։ զլուխս խառնվեց=վրց. քավի
 տմերիա ճատ գործերով ճրաղվելուց խառնվել»։ զլուխը ձեծել=վրց. քավի
 ցեմա ճկոծել, սգալ, ողբալ»։ զլուխը ծռել=վրց. քավիս մոխրա ճնազանդ-
 վել»։ զլուխը կախել=վրց. քավիս դախրա ճցած նայել»։ զլուխը կախ=վրց.
 քավ դախրիլի ճառթահար»։ զլուխը կորցնել=վրց. քավիս դակարզվա ճշվա-
 րել, անելիքը չիմանալ, չփոթվել»։ զլուխը հաստ=վրց. քավ-սֆելի ճաս-
 տաղլուխ, բան չհասկացող»։ զլուխը ետ գնել=վրց. քավիս ճաղաղեբա
 թի սեր մի բանի անձը գոհել»։ զլուխը շինել=վրց. քավիս ճակեբեբա մա-
 գերը սարքել»։ զլուխը քաշ անել=վրց. քավիս դաղունվա խոնարհվել»։
 զլուխը քորել=վրց. քավիս սոխանա մի բան անելու մասին մտածել»։
 զլուխը քարը տուր=վրց. քավի ֆվա տալիս ճարհամարհական ոճ է»։
 ճիխն ավետարան կարդալ=վրց. քավիս տալեբիս ծակիթիվա ճարատել,
 խրատներ կարդալ»։ ճիխն լափ ածել (|| ճիխն շան լափ ածել) =վրց. քավ-
 ճի լափիս դասխմա || քավիս ճաղիլիս լափիս ճասխմա ճանպարտվել, նախա-
 տել»։ ճիխն կանգնել=վրց. քավիս ճգոմա ճաշտպան հանդիսանալ, նաև
 ստիպել»։ ճիխն նստել=վրց. քավիս ճղսմա ճիրեն ենթարկել, իշխել, ճնշել,
 բռնանալ մեկուն վրա՝ անոր թուլություն պատճառով»։ ճիխն նստեցնել =
 վրց. քավիս դասմա ճերես տալ»։ ճիխն պոպոք կոտրել=վրց. քավիս կակ-
 լիս մտվրեվա ճտանջել, նեղել, ճարհարել»։ ճիխ վրա տալ=վրց. քավսաղ-
 բելի մի բան ճիխն թափել, լցնել, լիացնել»։ ճիխն փափախ չկա=վրց.
 քավիս ճուլի ար տղեվա ճպատվասիրություն չունի»։ ճիխից ձեռք քաշել
 (|| վերցնել) =վրց. քավիդոն թելիս տոբա ճիր կյանքին, ապրելուն նշա-
 նակություն չտալ, մահն աչքի առաջն ունենալ և ի սեր մի բանի անձը
 գոհել, մեռնել»։ ճիխից ուղ անել=վրց. քավիդոն մսղոբեբա ճորեճ հնար-
 քով մեկին մոտից հեռացնել»։ ճիխովը պտույտ գալ=վրց. քավս ճեմսվիբա
 փայփայել, սիրել»։ ճիխումը նստեցնել=վրց. քավի ճասվմա ճլավ հասկաց-
 նել, տպավորել, ճմբռնել տալ»։ ճիխումս չի նստում (|| ճլուխս չի մտնում) =
 վրց. քավի ճար միջոբա || քավի ճար ճեմդիս ճեմ ճմբռնում, ճեմ հասկա-

նում»։ գլխուն դարնեց=վրց. քավչի եցտ «գինին խմելն գլուխը տաքանալ կամ դառնալ»։ գլուխ թոցրեց=վրց. քավի «մտադեղերին «գլխատեց, գլուխը կտրեց»։ գլուխս ուրցրեց=վրց. քավի դամիսիա «շատ խոսելով ձանձրացրեց»։ գլխի տեր=վրց. քավիս ուփալի «ինքնագլուխ, աղատ»։ գլուխ քերելու («քորելու») ժամանակ չունեմ=վրց. քավիս մոթեմնիս դրո արա մոթվս «երևալ ժամանակ չունեմ, շատ դժգոհված եմ»... և այլն։ Այսպես նաև (Թրիլիսի բարբառում, որ կան նաև ուրիշ բարբառներում էլ) գլուխ դիր էդ բանին=վրց. քավի դառնդե մոզ ռաֆմես «հետևի, զբաղվիր այդ գործով»։ գլխումը տված=վրց. քավչի դեկրուլի «չարի խփած, խելքը կորցրած»։ գլխին փաթաթեցին=վրց. քավգե մոթիսլիս «գոռով մի բան տալ»։ գլուխն է ջարդում=վրց. քավս իմտվրեվս «աշխատում է սաստիկ»։ գլուխ դինի=վրց. քավի դվինն «թանկագին, լավ գինի»։ գլուխս կտրեց=վրց. քավի մոմնա «խայտառակեց»։ էն գլխից գիտեմ=վրց. իմ քավիդան վիցի «սկզբից գիտեմ»։ ինչ գլխիս եմ տալիս=վրց. րա քավչի վիսլի «ինչիս է պետք»։ ինչ քար տամ գլխիս=վրց. րա փա վիսալս քավչի «ճար չունեմ»։ տարվա գլխին=վրց. ծլիս քավգե «տարին լրանալիս»։ քո գլուխը չունեմ=վրց. շենի քավի արա մափս «քեզ հետ ի վիճակի չեմ խոսելու, տրամադրություն չունեմ»։ գլուխս է՛լ իմս չէ=վրց. քավի չեմի արար արիս «այլևս բան չեմ հասկանում»։ գլուխս տարավ=վրց. քավի ծաիդ «զահլա տարավ, ձանձրացրեց»... և այլն։

դ) «Աչխի» հետ կապված ընդհանուր դարձվածքները. աչխի հետ բաժանական թվով արտահայտություններ են կապված երկու լեզվում էլ, և նա կարող է դրվել տարբեր հոլովով ու թվով։ Իրանցից են. օր., աչքը կապել=վրց. տջալոն օծմա (թվալիս արմա) «խորամանկությամբ խաբել»։ աչք առնել=վրց. տջալոն օլջօ (թվալիս աղբա) «չար աչքից ֆնասվել»։ աչք ածել (« աչք ման ածել») =վրց. տջալոն ճառալլեծա (թվալիս զադավլա-րա) «այս ու այն կողմը նայել, տնտղել»... Այսպես նաև՝ աչք բռնել=վրց. թվալիս դաներա «նայել, հսկել, հովանավորել»։ աչքդ լույս=վրց. փալթ-նաթելի «ավետիք տալ»։ աչքը խաղալ = վրց. թվալիս քամոչի «մեկի գալը կամ որևէ բան կանխագուշակելու նշան»։ աչքը շլել=վրց. թվալիս զաշ-տերերա «մեկին սպասելու նշան»։ աչքն առնել (« աչքի գալ || աչքը գալ || աչքում գալ») =վրց. թվալչի մոսվա «մի բան դուր գալ, հավանել, նշանա-կություն ունենալ, երևալ»։ աչքը դռանը պահել=վրց. թվալիս կարգե ներա «տնից չհեռանալ, հսկել»։ աչքս դուռը մնաց=վրց. թվալի կարչի դամրչա «ակնդետ նայել»։ աչքը կուշտ=վրց. թվալ-մամդարի «անկարող, ունևոր»։ աչքը անկուշտ=վրց. թվալ-գամումդարի «ագահ»։ աչքը կշտանալ=վրց. թվալիս զամդամ «մի բանից լիանալ, հագնալ»։ աչքը կոխել=վրց. թվալ-չի չաչրա «աչքը մի բան խրել, խոթել, հայտնի կերպով ցույց տալ»։ աչքը հանել=վրց. թվալիս մաթիւր «վատ բանի դիմաց վատ բան անել, մեկին մեծապես ֆնասել, պատժել»։ աչքը ճամբին մնալ=վրց. թվալիս զգագե ներա «ակնդետ սպասել»։ աչքը վախենալ=վրց. թվալիս շեշիներա «մի բանից վախենալ կամ քաջությունը կորցնելով անհաջող ելք մը գուշակել»։ աչքը վրա պահել (« աչքը վրեն պահել») =վրց. թվալիս զեդ ներա «աչքը մի բանի վրա զգած ուշադրությամբ նայել, կամ մեկին նայել, խնամել, պահպա-նել, մի բանի հսկել»։ աչքը վրեն մնալ=վրց. թվալիս զեդ դարչամ «մի բանից կարոտով մնալ»։ աչքելը գնալ=վրց. թվալիս ծասվա «խոնջու-

թյունից քունը տանելը. աչքերը կապել=վրց. բվալեբիս Թամա «մեկին խո-
րաժանկությամբ խաբելը». աչքերը մթնել=վրց. բվալեբիս դարձնելը «աչ-
քերի լույսի մթագնելը, նսեմանալը». աչքերը շաղկել=վրց. բվալեբիս Թան-
լեբա «աչքերի լույսի խառնվելը, պղտորվելը, խժի-բժի անելը». աչքերը
չոռել=վրց. բվալեբիս դանդախտ «աչքերը լայն բանալով դարձացմամբ նա-
յելը». աչքի ընկնել (|| աչքի խփել || աչքին դիպել || աչքին գարնել)=վրց.
բվալի ցեմա «մի բանի լավ կամ վատ կողմերը, յուրահատկությունը աչ-
քի երևալ, աչքի խփելը». աչքի լույս=վրց. բվալիս սիմաթի «փխր. սիրելի
անձ». աչքի առաջ ունենալ=վրց. բվալծին Բանբա «մի բանի նկատի
ունենալը». աչքի անցկացնել (|| անցնել)=վրց. բվալիս դադավեբա «նայել.
թեթևակի քննելը». աչքի փուշ=վրց. բվալիս եկալի «ատելիք». աչքի դ
վերևին
ունք կա=վրց. բվալգևիթ Թարբի դափս «մեկի հետ այնքան մեղմ, քնքույշ
և ներողաբար վարվել. որ մինչև իսկ թույլ չաալ իրեն ասելու, թե աչքիդ
վերևը հոնք կա». աչքից հանել=վրց. բվալիդաձ Թամդեբա «այլևս չսիրել.
ատելը». աչքով ընկնել=վրց. բվալի ցեմա «աչքի ընկնել-երևալը». աչքով
արեց=վրց. բվալի ուղ'ո «իմաց տվեց». աչքով տալ=վրց. բվալիս կվր
«մեկին նայելով միասելը». աչքերով ուտել=վրց. բվալեբիթ Թամա «ամենայն
բարի կամ չար կիրք, ցանկություն աչքերի վառ շարժումներով արտահայ-
տելը». աչք ու ունքը կիսել=վրց. բվալ-Թարբիս շեկվրա «խոժոռել, ախուր
երես ցույց տալը». աչքաբաց (|| աչքը բաց)=վրց. բվալ-դիա «աչալուրճ, ար-
թուն, շրջահայաց». աչքաթող անել=վրց. բվալիս միտովեբա «մի բան աչ-
քից թողնել, չտեսնելը». աչքակապուկ=վրց. բվալխուցիլԹամա «մանկանց խա-
ղի անուն է». աչքակապություն=վրց. բվալիս աբմա «ձեռնածություն, կա-
խարդություն, խաբություն անելը». աչքանպելում=վրց. բվալիս դալԹամ-
Թամեբաժի «մի ակնթարթում, իսկույն». աչքաուլունք (|| աչքուլունք)=
վրց. բվալ-Թամդալիտի «կապույտ, կանաչ և կարմիր գույներով հուլունք». աչքել-
վրց. բվալ-Բվալի «հայել, աչքել, դիտել, նայել». աչքով-ունքով=վրց. բվալ-Թարբի
Թամա «աչքեղ, գեղեցիկ աչք ու հոնք ունեցողը». մի աչք խա-
նութ=վրց. երթի բվալի դուժմեի «մի խանութ». լավ աչքով է նայում=
վրց. կարգ բվալիթ ուղ'ուրեբա «սիրով է վերաբերվում, բարի մտադրու-
թյուններ ունի». աչքը բացվեց=վրց. բվալի գեմսիմա «ճարպիկ, ճարտար
դարձավ». աչքը գոց=վրց. բվալեբ-դալԹամուլի «անճարակ. բնավ ճարպ-
կություն չունեցողը». աչքից ընկավ=վրց. բվալի դեմեա «նախկին հարգը
կորցրեց, այլևս չսիրվեց». աչքը կպցրեց=վրց. բվալի մուլա «քիչ մը
քնեց, թեթև մրափ մը առավ». աչքդ (|| աչքերդ) ուր էր=վրց. բվալեբի
Թամա «գեղեցիկ աչք ունեցողը». աչքը վրան է=վրց. բվալի գեղա աբվս
«հավանում է, սիրում է». վատ աչքով է նայում=վրց. ցուղ բվալիթ ուղ ու-
րեբա «չի համակրում... և այլն. Այսպես նաև (Թրիլիսի բարբառում, որ
կան նաև ուրիշ բարբառներում)՝ աչքս կտորվեց=վրց. բվալի գամիտղ'դ
«վախեցա». աչքս վախեցավ=վրց. բվալի շեմիլիդա «վախից ընկճվեցի». աչքով
կերան ինձ=վրց. բվալիթ շեմնամնա «թշնամացան-Պեսսեցին». աչ-
քերս գնում են քնի համար=վրց. բվալեբի միմդիս ձիլիսաբվիս «չաա եմ
ուզում քնել». աչքս չի կտրում=վրց. բվալի Թարբիս «չեմ տեսնում». աչքս
վրեն մնաց=վրց. բվալի գեղ դամրա «հավանեցի, կարոտեցի». աչքը
դիպավ=վրց. բվալի եցա «Պեսսեցի». աչքդ բաց արա=վրց. բվալի գեմսիլ-
լի «գզաստացիր, ուրախացիր». աչքերս չեմ խփել էս գիշեր=վրց. բվալի

Տեղեկագիր 2—3, 5

առ մամիսունով ամ դամես *չեմ քնիլ*։ *աչքը կպցրեց նրան=վրց*։ թվալի մեկրա *ենկատեց*։ *աչքս (|| աչքերս) ջուր դարձավ=վրց*։ թվալեթի ծգ'լող մեքցո *շատ սպասեցի, կամ սաստիկ լաց եղա, արտասվեցի*։ *աչքից պեցց նրան=վրց*։ թվալիդան տմոիգո *ատեց*։ *աչքումս չի գալիս=վրց*։ թվալի տր մամդիս *չեմ հավանում*։ *աչքի տակը կունենամ=վրց*։ թվալ-ֆվեշ մեք-նեքա *չեմ մոռանա, նկատի կունենամ*։ *աչքս իսարսն է տալիս (|| դավա-ճանում է)=վրց*։ թվալի մատգ'ուեքս *լավ չեմ տեսնում*։ *աչքիս լույսը հատել է=վրց*։ թվալիս օինաթիբ գամոմեիլա *կուերացա*։ *աչքի լույսը դուրս ելավ=վրց*։ թվալի գամեկարդա *պատժվեց*։ *աչքով արավ=թվալի ուզ'ո՞ւնչան արեց*։ *աչքս նրա վրա ունեմ բռնած=վրց*։ թվալի գեռ մինիրավս *ենրան եմ ուզում*։ *աչքս ճամբի վրա է=վրց*։ թվալի գգագե մինիրավս *սպասում եմ*։ *աչքումը երեաց (|| աչքին երեաց)=վրց*։ թվալի մեքվեքա *թվաց, երեաց*։ *աչքարաց մարդ է=վրց*։ թվալի կացիտ *աչալուր կտրուկ մարդ է*։ *աչքերը լցվեցին=վրց*։ թվալեթի անվոս *արցունքներով լցվեցին, լալու պատրաստվեց*... և այլն։

ե) «Բերունի» հետ կապված ընդհանուր դարձվածքները. բերունի *հետ էլ բավական թվով ընդհանուր դարձվածքներ են կապված*։ Այդպիսի դարձվածքներից են, օր., բերան-բաց *մնալ=ձուռ-լուծ լծահոծ* (պիր-դիա դարչոմա) *դարձացած, ապշած, դժայլված մնալ*։ բերանը ժած տալ *|| (բերանը շարժել)=ձուռն ջանձրոծ* (պիրիս գամոմեիլա) *բերանը շարժել, խոսել*։ բեր-նի *ջուրը վազել (|| գնալ)=ձուռն ջրլուծ ջանջլա* (պիրիս ծալիս ծալիլ) *մի բան ուտելու անձկությունից թուլանալ*... Այսպես նաև բերնի վրա գալ *(|| ընկնել)=վրց*։ պիրգե դացեմա *եբեսնիվալը ընկնել*։ բերնին թքել *=վրց*։ պիրշի միփուրթիքա *աժաչեցնել, խայտառակել*։ բերնին լեզու կա *=վրց*։ պիրշի *եմ ափս ճարտար, վարժ խոսող է*։ բերնին հուպ տալ *=վրց*։ պիրիս մաներո *լուծել*։ բերնից *գեչ=վրց*։ պիր-մդ'րուլի *հայհոյիչ*։ բերնից *թուլլ (|| բաց-բերան)=վրց*։ պիրիդոմ բոշի *գաղտնիք չպահող*։ բերնից *կաթի հոտ է գալիս=վրց*։ պիրիդան բոնիս սունի *ամուսնիս առաջափահաս է, տարիքը չառած*։ բերնից *կրակ է թափում=վրց*։ պիրիդան ցեցիլսա *եզրիս զայրացած է խոսում*։ բերնի համը *=վրց*։ պիրիս գեմս *հաշակ*։ բերանդ *կցավի=վրց*։ պիրի գետկինեքա *հեշ մնա կկրես, կթե ասես*։ խոսքը բե-րանը *մնաց=վրց*։ սիտդ'վա պիրշի դանդա *չթողեցին, որ խոսքը վերջաց-նի*։ բերնից *հետ լիքը=վրց*։ պիրամդիլս սավսե *լեփ-լեցուն*։ բերանքս *ի վար=վրց*։ պիր-դադմա *եբեսի վրա (ընկնել, քնել)*... և այլն։ Այսպես նաև *(թրիլիսի բարբառում) բերնումը լեզու չունի=վրց*։ պիրշի *եմ արա ավս շատ հարբած է*։ բերնումս *եկավ-ասի=վրց*։ պիրշի *մամիվիդո վթվի առանց մտածելու ասի*։ բերնումը *սատանի լեզու ունի (|| բերանումը շան լեզու ունի)=վրց*։ պիրշի *եմակիս եմ ափս (|| պիրշի ձաղիլս եմ ափս) շատ ճարտարախոս է, շատախոս է*։ բերանս *խաբեցի=վրց*։ պիրս *մովատդ ուն քիչ բան կերա*։ բերնից *դուրս ընկավ (|| թռավ) խոսքը=վրց*։ պիրիդան գամեկարդա *սիտդ'վա հանկարծ, առանց մտածելու ասա-ցի*։ բերանս *արյունով է լիքը=վրց*։ պիրի օիսիլիթ *մափս սավսե խիստ վշտացած եմ*... և այլն։

զ) «Թրեսի» հետ կապված ընդհանուր դարձվածքները. երեսի *հետ էլ կապված են մի շարք ընդհանուր արտահայտություններ, ինչպես, օր., երես դարձնել=ձուռն փոխել* (պիրիս ավցեկա) *շուռ գալ*։ *երես ունենալ=ձուռն*

ձոնցձա (պիրիս ֆոնեբա) «վարժ, համարում ունենալ», երեսը պարզ=ձու-
նաթղև (պիր-մաթելի) «մաքուր»... Այսպես նաև երկ-երեսանի մարզ=վրց.
օր-պիրա կացի «կեղծ մարդ», երեսի ջուր ունի=վրց. պիր-ձգ'ալի ափս
«ամոթ, պատկառանք ունի», երեսից լույս է վեր դալիս=վրց. պիրիդեմ
նութելի չամուղիս «շատ սպիտակ է», երեսից կեղտ է վեր գալիս=պիրի-
դան դադի չամուղիս «շատ կեղտոտ է», երեսի վրա գալ=վրց. պիրգե դե-
ցեմա «վայր ընկնել», երեսին խաչ հանել=վրց. պիրզվորիս ծերու «խաչա-
կնքել», երեսին ասել=վրց. պիրշի քմա «ուղղակի ասել, չթաքցնել», երես-
րաց=վրց. պիր-դիտ «առանց ծածկոցի», ինչ երեսով տեսնեմ նրան=վրց.
րա պիրիք վինախուլու «ամաչում եմ տեսնել նրան», ինչպես նաև (Ակնա
բարբառում) բերան բերնի են տվել=վրց. պիրի պիրս միսցես «միաբանե-
ցին», բերան ծուել=վրց. պիրիս մեցրելա «մի բան դուր չդալ», բերնի հա-
մը գնաց=վրց. պիրիս գեմ ծովիդ «նախկին հանգիստ կամ դվարթ վի-
ճակն անցավ»... և այլն:

է) «Լեզվի» հետ կապված ընդհանուր դարձվածքները, կան նաև լեզվի
հետ կապված ընդհանուր արտահայտությունները, ինչպիսիք են՝ լեզուն
փորն ընկավ=յժա թլցեղմի հաշվարդա (հետ մուցելի չամուղիդ) «վախե-
ցավ», լեզուն երկարացրեց=յժա լադգրժեղա (հետ դախգրժելա) «մեծամտեց»,
համարձակություն, հանդուժություն ստացավ, խոսելու չափ ու սահմանից
դուրս եկավ, լեզվիս (|| լեզուս) կծեցի=յժա ջոյծոնց (հետ վիկքինե) «մեկին
հիշեցի կամ մի մոռացած բան միտ բերեցի, դիտի ընկա»... Այսպես նաև՝
լեզուն կապ ընկավ (|| բռնվեց) — վրց. հետ դաեբա «չկարողացավ խոսել»,
լեզվիս ծերին է կանգնած=վրց. հնիս ծվերգե մաղդա «դիտեմ, բայց չեմ
կարողանում մտաբերել խոսքը», լեզուն կուտեց=վրց. հետ գուիանիսա
«սկսեց խոսել սովորել», լեզուս շաղվեց=վրց. հետ ամեբա «սկսեցի խոս-
նաչփոթ խոսել», լեզուդ քեզ քաշիր — վրց. հետ շիծի «լուիր», լեզուն եր-
կար (|| երկայն) = վրց. հետ-գրժելի «մեծամիտ, խոսելու չափ ու սահմանից
դուրս եկող, ըմբոստ կերպով խոսող», լեզուն կարճ = վրց. հետ-մուկլե «մի
բանի մասին խոսելու իրավունքից զուրկ, մանավանդ երբ մի հանցանքի
տեր է», լեզվավորվել=վրց. հնիս ամեղգամ «սովորել թոթովել-խոսել ||
հանդուգն խոսել, պատասխան տալ», լեզուս բերնիս մեջ չորացավ=վրց. հետ
պիրշի գամիշրու «սարսափահար եղա», լեզուն ցամաքեց=վրց. հետ գուուշրու
«սաստիկ վախեցավ», նաև՝ ծարավեց, լեզուն բաց արեց — վրց. հետ գուեխ-
սնա «սկսեց խոսել», լեզու ելլել=վրց. հնիս ալգամ «փոքր մանուկներու
խոսել սկսելը», լավ լեզու ունի=վրց. կարգի հետ ափս «լավ է խոսում,
լավ է տրամաբանում»... և այլն:

ը) «Սրտի» հետ կապված ընդհանուր դարձվածքները, երկու լեզվում
էլ թվով քիչ չեն այն պիսի դարձվածքներ, որոնք կապվում են օրտի հետ:
Այդպիսիներից են, օր., սիրտ տալ=աղուս թուցեմ (գուլիս միցեմ) «քաջա-
լերել», սիրտը բարակ=ջլ թուցա (գուլ ղիղա) «դուրազգաց», սիրտը բաց
անել=ջլուս ջասնա (գուլիս գասխնա) «մեկին յուր ցավերն ասել, պատ-
մել»... Այսպես նաև սիրտը բացվել = վրց. գուլիս գաթթուր «զբաղվել, ու-
րախանալ, գվարճանալ», սիրտս փորս ընկավ=վրց. գուլի մուցելի չամի-
վարդա «ահաբեկվեցի, վախեցա», սիրտս բերնովս դուրս է դալիս — վրց.

